ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« 18 » հուլիսի 2015թ. գ. Ամբերդ

Հարգելի Ամբերդ Համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին և ասեմ որ, այս ժողովին ներկա է նաև Արմավիրի մարզպետարանի աշխատակից Արայիկ Հակոբյանը: Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին: Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատավել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում հավաքագրվել է ընդհամենը 14482,5 հազար դրամ գումար , որը կազմում է 2015 թվականի 1-ին կիսամյակի կատարողականի 96,6 % -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 1146,8 հազար դրամ

բ/ Գույքահարկ հավաքագրվել է 600,0 հազար դրամ

գ/ Վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 28.2 հազար դրամ

դ/ Պետության կողմից դոտացյա 12666,5 հազար դրամ

ե/ Տեղական տուրք 39,4 հազար դրամ

զ/ Այլ ոչ հարկային գումարներ 1,5 հազար դրամ

Համայնքում սեփական եկամուտների % -ը կազմում է 78.1 % : Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները : Համայնքի անապահով ընտանիքներին տրամադրվել է սոցիալական օգնություններ: Ապրիլի 24-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված հայոց մեծ եղեռնի 100 ամյակին և մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Արցախյան պատերազմի հաղթանակի օրվա առթիվ:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար :

2. Պաշտպանության բնագավառում

Իմ առաջին նախապայմանն այն է որ, համայնքում իշխի հայրենասիրությունը: Վերջապես բոլորս ապրում ենք Հայաստան աշխարհում , որը մեր բոլորիս տունն է: Հայրենիքի պաշտպանության համար սիրով պետք է կատարենք մեր

պարտականությունները, այլապես ազգը, որ գոյատեվել է դարեր շարունակ կկործանենք, որի իրավունքը մենք չունենք : Մեր պապերից փոխանցված երկիրը մենք պետք է զարգացնենք: Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչճից խուսափոխ թվով 10 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության: Մեր համայնքի համար ուղակի ամոթ է զորակոչից խուսափելը:

3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Համայնքում կան տներ, որոնց սեսմակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Կան շենքեր որոնց մի մասը չեն դիմանա 3-ից 4 բալանոց երկրաշարժից: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության: Համայնքում բնակիչները արդեն հասկացել են որ պիտի շինարարություն անելուց առաջ հանեն համապատասխան շինարարության թույլտվություն:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակույթային հողերը: Այս տարի հասանք նրան որ համայնքում շատ քիչ հողեր են մնացել որոնք չեն մշակվում:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը: Մենք ուղակի հիշելով մեր ավիրված ճանապարհը աչքի լույսի պես պետք է պահպանենք մեր գլխավոր ճանապարհը, որը կառուցվել է պետության կողմից:

6. 2015 թվականի բյուջե

2015 թվականի բյուջեում նախատեսված է հետևյալ աշխատանքները.

1. Տեղական ինքնակառավարում /գյուղապետարան/ 1839.0 հազար դրամ
2. Մշակույթ միացյալ տնօրինություն 6204.0 հազար դրամ
3. Աղբահանություն 1300.0 հազար դրամ
4. Սպորտ ծառայություն 1100.0 հազար դրամ
5. Սոցիալական օգնություն 3750.0 հազար դրամ
6. Այլ մշակույթային կազմակերպություն 1500.0 հազար դրամ
7. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն 1634.5 հազար դրամ
8. Ընդհանուր բնույթի այլ ծառայություն 28.8 հազար դրամ

7. Գյուղատնտեսության բնագավառ

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարվել է ընտանի կենդանիների հաշվառում, որի արդյունքները հետևյալն են՝

8. Խոշոր եղջերավոր անասուններ 387 որից՝
ա/ կովեր 119
բ/ արտադրող ցուլեր 2
գ/ երինջներ 1-ից 2 տարեկան 62
դ/ երինջներ 2-ից բարձր 24
ե/ այլ սեռատարիքային 37
9. խոզեր 171 որից՝
ա/ մայրեր 28
բ/ 4-ից 12 ամսեկան 67
10. հավեր 1553 որից ածան հավեր
ա/ 1265

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
2. Մանկապարտեզի շենքի կառուցում
3. Ակումբի շենքի մասնակի վերանորոգում
4. Ոռոգման ցանցի վերանորոգում
5. Հակակարկուտային կայանների տեղադրում /առնվազն 3 հատ/

Համայնքի ղեկավար Մ. Բաբայան